

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողովի նիստի

ք. Հրազդան

20.08.2014թ.

**Մասնակցում էին՝**

1. Գ.Գրիգորյան ՀՀ ԱԻ նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
2. Գ.Մարտիրոսյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, անդամ
3. Ա.Հակոբյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, անդամ
4. Ռ.Ներսեսյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ, անդամ
5. Ա.Ասատրյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, անդամ

**Քննարկվեց՝**

Մարզի Արամուս, Քասախ և Զովունի համայնքների արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համայնքային հանձնաժողովների կողմից կազմված 2014 թվականին ուժեղ քամուց շենք, շինություններին պատճառված վնասի չափի մասին ակտերի քննարկում:

(գեկուցող՝ ՀՀ ԱԻ նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ.Գրիգորյան)

**Ընդունվեց ի գիտություն՝**

Հավանություն տրվեց համայնքային հանձնաժողովների կազմած ակտերին:

**Հանձնաժողովին հանձնարարվեց՝**

Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը ուղարկել «ՀՀ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հանրապետական հանձնաժողովին»:

ՀՀ ԱԻ նախարարության Հայաստանի փրկարար ծառայության  
Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ,  
հանձնաժողովի նախագահի տեղակալ՝



Գ.Գրիգորյան